28.12.2021թ.
348-44

Ֆինանսների նախարար
Տիգրան Խաչատրյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Խաչատրյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Արդյո՞ք նախարարությունը վարում է տեղեկություն ստանալու հարցումների առանձին վիճակագրություն, թե այն ներառված է քաղաքացիներից ստացված դիմումների ընդհանուր վիճակագրության մեջ:

2. Ու՞մ (ո՞ր պաշտոնյայի, բաժնի կամ վարչության) վրա է դրված վերոնշյալ վիճակագրությունը (եթե հարցումների վիճակագրությունն առանձին է վարվում, ապա հենց հարցումների վիճակագրությունը) վարելու պարտականությունը:

3. Ինչպե՞ս (ի՞նչ աղբյուրներից) է ձևավորվում վերոնշյալ վիճակագրությունը (եթե հարցումների վիճակագրությունն առանձին է վարվում, ապա հենց հարցումների վիճակագրությունը), վիճակագրությունը վարող աշխատողը (բաժինը/վարչությունը) ինչպե՞ս է ստանում հարցումների և դրանց պատասխանների քանակի վերաբերյալ կամ անհրաժեշտ այլ տեղեկությունները:

4. Հրապարակվում է արդյո՞ք վերոնշյալ վիճակագրությունը (եթե հարցումների վիճակագրությունն առանձին է վարվում, ապա հենց հարցումների վիճակագրությունը): Եթե այո, ապա խնդրում ենք տրամադրել համապատասխան հղումը (ակտիվ):

5. Արդյո՞ք նախարարության տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձը երբևէ մասնակցել է տեղեկատվության ազատության վերաբերյալ որևէ դասընթացի կամ վերապատրաստման: Եթե այո, քանի՞ վերապատրաստման և ե՞րբ:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Ուշադրություն: Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես ***էլեկտրոնային եղանակով:***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան